## ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

*Մեծին Նաբոլէոնի ժամանակ շինուած յիշատակարանները :*

Ոչ միայն պատերազմական հանճարովն ու զինուց յաջողութեամբ անուանի եղաւ մեծն Նաբոլէոն, այլ նաև մեծագործութեամբը, ու արուեստից և գիտութեանց յառաջադիմութեանը համար ունեցած ջանքովը : Մենք միայն իր թագաւորութեանը ատեն հասարակաց շինութեանց համար եղած ծախքը յիշատակենք օրագրիս մէջ :

1. Արքունի ճամբաներու շինութեանց համար ըրած ծախքերը. — Մօն-Սընիի, Սենբլօնի, Մայէնցայի, Ամպերտամի, Մատրիտի, և ուրիշ այլ և այլ ճամբաներու, որոնք հարկաւոր էին. 276,000,000 Ֆր.

2. Կամուրջներու համար. — Տիւրանսի, Ռուանի, Պորտոյի, Գիլսիդի ('ի Լիոն), Րոյի ('ի Գուրին), և այլն . 30,000,000

3. Ջրանցքներու համար. — Ռօնի, Սէն-Քանդէնի, Բուրգօնտիոյ, և այլն . . . . . . . . . . 48,000,000

4. Նաւահանգիստներու համար. — Շէրպուրկի, Հաւրի, Անվերսայի, Տէօնքերքի, Օստէնտայի, և այլն . . . 116,000,000

5. Ամրութեանց համար. — Աղեքսանդրիոյ, Պուլօնեի, Փլէսսինկի, և այլն . . . . . . . . . 140,000,000

6. Նորոգութեանց համար. — Վերսայլի, Գոմբիէնեի, Ֆօնդէնըպլոյի, Մարլեայ մեքենային, Սէն-Տընի եկեղեցւոյն, և այլն . . . . . . . . . . 32,000,000

7. Հասարակաց օգտակար ու զարդարութեան տեղեաց համար. — Մուրացողներու համար ապաստանարաններ, բանտերու կարգաւորութիւն, գերեզմանատուններ, ջերմուկներու տեղ, որբանոցներ, հիւանդանոցներ, և այլն . . 222,997,000

8. Պարիզ քաղաքը զարդարելուն համար. — Ուրքք Ջրանցքին, Վաճառականաց ժողովատեղւոյն, Լուվրի, Դիւլըրիեայ, յաղթական կամարներու, կոթողներու, փողոցներու, վաճառատեղիներու, հրապարակներու, սպանդանոցներու, աղբիւրներու, դղեակներու, և այլն . . . . . 129,471,000

Բովանդակութիւնը . 994,668,000 Ֆր.

Վերոյիշեալ եօթը առաջին հաշիւներուն մանրամասն տեղեկութիւնը այսօրուան օրս շատ հետաքրքրական մը չըլլալով, հոս կը դնենք միայն ութերորդ հաշուին, այսինքն Պարիզ քաղաքը զարդարելուն համար իւրաքանչիւր բանին առանձին առանձին եղած ծախքը :

1. Ուրքի Ջրանցքին ծախքն եղաւ . . . 19,500,000 Ֆր.
2. Մուսէոնին աշխատութեանց . . . . 11,100,000
3. Գետեզերեայ ճամբաներուն . . . . 11,000,000
4. Լուվրի . . . . . . . . 10,300,000
5. Դիւլըրիեայ . . . . . . . 6,700,000
6. Սպանդանոցներու . . . . . . 6,700,000
7. Վաճառականաց ժողովատեղւոյն . . . 6,000,000

Գումարը . 71,300,000 Ֆր.

| | | |
|---|---|---|
| | Առաջի երեսին գումարը . | 71,300,000 Ֆր. |
| 8. | Իէնայի կամրջին | 4,800,000 |
| 9. | Աստեղ կամարին | 4,500,000 |
| 10. | Վաճառատեղեաց | 4,000,000 |
| 11. | Փողոցներու և Հրապարակներու | 4,000,000 |
| 12. | Աւստերլիցի կամրջին | 3,000,000 |
| 13. | Օրէնսդիր պալատին | 3,000,000 |
| 14. | Մեծ վաճառանոցին | 2,900,000 |
| 15. | Արքեպիսկոպոսարանին | 2,500,000 |
| 16. | Նաբոլէոնի որդւոյն պալատին | 2,500,000 |
| 17. | Սրբուհւոյն Կլօթիլտեւի եկեղեցւոյն | 2,000,000 |
| 18. | Փառաց տաճարին | 2,000,000 |
| 19. | Խղթատան | 1,800,000 |
| 20. | Վանտոմի սեան | 1,500,000 |
| 21. | Գարուզէլի յաղթական կամարին | 1,400,000 |
| 22. | Նոր-Կամրջի կոթողին | 1,200,000 |
| 23. | Արտաքին ազգաց հետ հաղորդակցութեան պաշտօնարանին | 1,000,000 |
| 24. | Գրիւանի պալատին | 1,000,000 |
| 25. | Արուեստից կամրջին | 900,000 |
| 26. | Տնկոց պարտիզին | 800,000 |
| 27. | Ցորենի վաճառանոցին | 750,000 |
| 28. | Գինւոյ վաճառանոցին | 750,000 |
| 29. | Պաստիյլի հրապարակին | 600,000 |
| 30. | Հրապարակներու արձաններուն | 600,000 |
| 31. | Իկկէաններու | 500,000 |
| 32. | Զանազան աշխատութեանց համար | 10,171,000 |
| | Ընդհանուր գումարը . | 129,471,000 Ֆր. |

# Բնական

## ԲՈՒՍԱԲԱՆՈՒԹԻՒՆ

### Սոճի ծառը [1] :

Սոճին անանկ ծառ մըն է, որուն տերեւները միշտ դալար են ու սաստկացօղ ձմեռներու ցրտին ալ կը դիմանան։ Ուղղակի վեր կը բարձրանայ՝ ութսուն ոտք աւելի. անտառի մէջ որ ըլլայ և ուրիշ ծառերէն արգիլուած՝ բունը մերկ կը մնայ, բայց երբոր բաց օդի մէջ ու առանձին տնկուած ըլլայ՝ ընդարձակ ճիւղեր կ'արձըկէ։ Այս ճիւղերը իրարմէ հաւասարապէս հեռաւորութիւն ունին, ու հորիզոնական դիրքով կը տարածուին, և իրարմէ աստիճանաբար պզտիկնալովին՝ ծառին վայելուչ բուրգի մը երևոյթ ու ձև կու տան. ասանկով սոճին դիւրաւ կը զանազանուի ուրիշ ծառերէն ։

Եւրոպայի մեծ մասին մէջ, մանաւանդ հիւսիսային ու լեռնային երկիրները, ինքիրեն կը բուսնի աս ծառս. իսկ տնկուելով՝ գրեթէ ամէն տեղ առաջ կու գայ ու դիւրաւ կ'աճի. սակայն ըստ այլ և այլ դիրքերու և ըստ զանազան կլիմայից տարբեր ժամանակ կը ծաղկի, ու կերպ կերպ կը փոփոխի ։ Օրինակի համար՝ քիչ մը խոնաւ հողի մէջ, մանաւանդ հիւսիսային աշխարհնե-

1 Գղ. Pin.